ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 փետրվարի 2013 թվականի N 41-Ա

ք. Հրազդան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի բ)կետի և 16-րդ հոդվածի 1-ին մասի ա),բ),դ),ե) կետերի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.22 կետով, ի կատարումն <<Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013 թվականի հիմնական միջոցառումների պլանի>> 10.2 կետի՝ ***որոշում եմ***

Կոտայքի մարզի տարածքում 2013 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով.

1. Հաստատել Կոտայքի մարզի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

մինչև 2013 թվականի մարտի 25-ը Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել՝

1) համապատասխան միջոցառումների պլան,

2) տեղեկություններ համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝ համաձայն N 2 հավելվածի.

3) առաջարկություններ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետին՝

1) ուսումնասիրել համայնքների ղեկավարների կողմից ներկայացված միջոցառումների պլաններն ու տեղեկատվությունները և ներկայացնել Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի քննարկմանը:

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակներում գործելու պլանը բերել պատրաստական վիճակի և անհրաժեշտության դեպքում պլանով նախատեսված միջոցառումները դնել գործողության մեջ:

4. Կոտայքի մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովին՝

Յուրաքանչյուր եռամսյակի առաջին տասնօրյակում քննարկել Կոտայքի մարզի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը և ներկայացնել տեղեկանքներ:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Կոտայքի մարզպետի տեղակալ Ալբերտ Ղազարյանի վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ